ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

Մուտք: Եթե մի պահ փորձենք անտեսել անցյալը և անդրադառնանք ներկա քաղաքական իրողություններին, կհամոզվենք, որ Հարավային Կովկասում և հարևան երկրներում հետխորհրդային ժամանակաշրջանի քաղաքական գործընթացների վրա ազդում են տարածաշրջանում բնակվող ազգերի կրոնական և էթնիկական ընդհանրությունները: Կրոնական և էթնիկական ընդհանրության ընկալումները հաճախ օգտագործվում են միջպետական հարաբերություններում, էթնոքաղաքական հակամարտությունների ժամանակ, տարածաշրջանային քաղաքական գործընթացներում, արտաքին հարաբերություններում դիրքորոշումներ արտահայտելիս և տեղեկատվական պատերազմներում: Կրոնական փոքրամասնությունների նկատմամբ վերաբերմունքը տեղափոխվում է նաև միջպետական հարաբերությունների հարթություն: Օրինակ՝ Թուրքիայում ապրող հրեաների, հույների, հայերի և ալևիների էթնոկրոնական համայնքների իրավունքների սահմանափակումները և իրականացվող խտրականությունը հաճախ արծարծվում են Հունաստանի, Իսրայելի, Հայաստանի և Սիրիայի հետ կապված գործընթացներում: ԱՄՆ-ի պետքարտուղարության՝ կրոնական փոքրամասնություններին նվիրված զեկույցում, որին անդրադարձել է նաև «Կալիֆորնիա կուրիեր» թերթի հրատարակիչ և խմբագիր Հարութ Սասունյանը, նշվում է, որ Թուրքիայում բնակվող բոլոր կրոնական խմբերը, որոնք սունի մահմեդական չեն, խտրականության ու հալածանքների են ենթարկվում: Ալևիներին, որոնք կազմում են Թուրքիայի 81միլիոն բնակչության մեկ քառորդը, պետությունը պիտակավորում է «հերետիկոս մահմեդականներ», իսկ նրանց պաշտամունքի վայրերը չեն ճանաչվում: Հաճախ թուրքական թերթերում հրապարակվում են հրեաներին վարկաբեկող հակասեմիտական հոդվածներ: Նախագահ Էրդողանը հանրությանը մշտապես հրահրում է հակաիսրայելական հռետորաբանությամբ[1]: «Հայ Առաքելական պատրիարքարանը և [հունական] Էկումենիկ պատրիարքարանը շարունակ ձգտել են իրավական ճանաչման, և նրանց համայնքները գործել են որպես անհա-

[1] Տե՛ս **Հ. Սասունյան,** Կրոնական ազատությունների մասին իր տարեկան զեկույցում ԱՄՆ-ի պետքարտուղարությունը խստորեն քննադատում է Թուրքիային // http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=17473 (վերջին մուտք՝ 29.03.2019):

տական կրոնական հիմնադրամների համախմբում: Քանի որ պատրիարքարանները չունեին իրավաբանական անձի կարգավիճակ, առանձին խորհուրդների կողմից վերահսկվող առընթեր հիմնադրամները տիրապետել են կրոնական համայնքների ամբողջ գույքը, և պատրիարքարանները որևէ իրավական իրավասություն չունեին ուղղորդելու ցանկացած ունեցվածքի օգտագործումը կամ այլ կերպ կառավարել իրենց համայնքները»[2], - նշված է ԱՄՆ-ի զեկույցում:

Հարավային Կովկասի միջազգայնորեն ճանաչված երեք պետությունների տիտղոսակիր ազգերի՝ հայերի, վրացիների և ադրբեջանցիների, չճանաչված և մասնակի ճանաչված պետությունների՝ Արցախի, Հարավային Օսիայի և Աբխազիայի, ինչպես նաև պետական կազմավորումներ չունեցող առավել փոքր էթնիկական հանրույթների շփումները բարեկամ-թշնամի ձևաչափով բավական բարդ բնույթ են կրում: Այս խնդրի հետազոտությունը առավել արդիական է քաղաքական գիտությունների տիրույթում: «Նորավանք» ԳԿՀ քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ, սոց. գ. թ. Սամվել Մանուկյանը Անդրկովկասում ազգամիջյան հարաբերություններին նվիրված սոցիոլոգիական հետազոտության մեջ արդարացիորեն նշում է. «Ոչ պակաս կարևոր են միջէթնիկ ընկալումները հարևան պետությունների էթնոսների միջև: Դրանց կոնֆիգուրացիաներն ունակ են, մի կողմից, նպաստելու միջպետական և միջհասարակական հարաբերությունների զարգացմանը, մյուս կողմից, սակայն, կարող են առաջացնել սպառնալիքներ: Տվյալ երկրում էթնիկ ընկալումներն իրենց նկատմամբ կարևորում են նաև գերտերությունները: Իրենց նկատմամբ դիրքորոշումների բարելավումը, իսկ մրցակիցների նկատմամբ՝ վատթարացումը հանդիսանում են այդ մրցակցության, իսկ այսօր արդեն՝ հիբրիդային պատերազմների կարևոր բաղադրիչներից մեկը»[3]: Իհարկե, ոչ միայն մեր, այլև հարևան տարածաշրջանների և աշխարհագրորեն ավելի հեռու ուժային կենտրոնների պետականակերտ ազգերի հանդեպ կրոնական և էթնիկական ընկալումները հաճախ դառնում են փոխհարաբերությունների բնույթի վրա ազդող դրական կամ բացասական գործոններ: Այդպիսի հակասություններով լի է տարածաշրջանում քրիստոնյա, սունի, շիա, հրեա, եվրոպացի, ամերիկացի, իրանցի, թուրք կրոնաէթնիկական ընդհանրությունների նույնականացումը: Աշխարհաքաղաքական կողմնորոշումներում վրացիների տեսլականը իրենց քրիստոնյա եվրոպացիների ընդհանրության մեջ տեսնելն է, իսկ ադրբեջանցիներինը՝ մահմեդական կամ թուրքախոս աշխարհի: Հայերի գործը բարդանում է, որովհետև անվտանգային տեսանկյունից քրիստոնյա եվրոպական ընդհանրության մաս կազմելու ձգտումը

---

[2] Նույն տեղում:

[3] **Ս. Մանուկյան**, Ազգամիջյան հարաբերություններն Անդրկովկասում // «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (77), 2018, էջ 4:

ստիպված են համատեղել ռուսական՝ եվրասիական ընդհանրության տեսլականին, որտեղ կրոնաէթնիկական պատկերը բավականին խայտաբղետ է: Էթնոկրոնական գործոնը անընդհատ հայտնվում է նաև ներպետական խնդիրների լուծման օրակարգում: Ի դեպ, այն կարող է ի հայտ գալ նույնիսկ համագործակցային ու ոչ կոնֆլիկտային միջպետական հարաբերություններում: Օրինակ՝ վրաց-ադրբեջանական հարաբերությունները, որոնք ռազմավարական համագործակցության բնույթ ունեն, երբեմն խամրում են Վրաստանի ներսում ադրբեջանցիների հետ կապված խնդիրների ծագման կամ, ասենք, Աջարիայում օր օրի ուժեղացող թուրքական ներթափանցման պատճառով: Վրացական ներկա և նախկին իշխանությունների թողտվության պատճառով Թուրքիան աստիճանաբար կլանում է Աջարիան: Թուրքական ներթափանցումը մշտապես ուղեկցվում է աջարների ու թուրքերի կրոնական և էթնիկական ընդհանրության նուրբ և քողարկված քարոզչությամբ, որն ի վերջո վնասելու է տնտեսական և էներգետիկ բնագավառներում վրաց-թուրքական բավականին խորացած համագործակցությունը: Բացառված չէ նաև, որ «աջարական հարցը» մոտ ապագայում դառնա վրաց-թուրքական հակամարտության աղբյուր[4]:

Նորագույն պատմությունը ցույց է տալիս, որ կոնֆլիկտների հրահրման տեխնոլոգիաներում միջէթնիկ և միջկրոնական ընկալումներն առաջնային գործիք են արտաքին քաղաքական դերակատարների համար, որով էլ պայմանավորված է սույն հետազոտության արդիականությունը: Այն իրականացնելու համար ընտրել ենք երկկողմ կամ բազմակողմ փոխհարաբերությունների ձևաչափերից մի քանիսը:

Ադրբեջան-Իրան-Թուրքիա եռանկյունին: Հակամարտությունը Ադրբեջանի հետ և հայ-թուրքական ոչ բարեկամական հարաբերությունները կարևորում են այս եռանկյունու ուսումնասիրությունը, որտեղ առկա են և՛ ձգող, և՛ վանող իրողություններ: Ադրբեջանում իրանցիների, ռուսների, հրեաների, լեզգիների, քրդերի նկատմամբ բարդ և խճճված, հակասական վերաբերմունքը առաջնային է մեզ համար նաև անվտանգային առումով: Իրավիճակը այնպիսին է, որ կրոնական ընդհանրության ընկալումը մերձեցնում է ադրբեջանցիներին իրանցիների հետ, միաժամանակ Իրանի հյուսիսային նահանգներում ադրբեջանական անջատողականությունը էթնիկական հակակրանքի ծավալման պատճառ է դառնում՝ մասամբ նպաստելով Իրանի հայամետ դիրքորոշմանը հայ-ադրբեջանական հակամարտ հարաբերություններում: Շիա և սունի կրոնական ուղղությունների միջև հակասությունները ցցուն երևում են և՛ մերձավորարևելյան, և՛ հարևան հարավկովկասյան տարածաշրջաններում, նույնիսկ սառեցնելով թուրք-ադրբեջանական տանդեմի ջերմությունը: Այս դեպքում, ըստ սոցիոլոգիական ուսում-

[4] Տե՛ս **Ованнисян А.** «Аджарский вопрос» в турецко-грузинских отношениях на современном этапе // «21-й ВЕК», 2018, № 3 (48), էջ 40:

նասիրությունների արդյունքների, թուրքերը ադրբեջանցիների համար «այլ էթնոս» են դառնում[5]: Յուրահատուկ է մեր հարևանների քաղաքական էլիտայի դիրքորոշումը, որն առավել աշխարհիկ դիմագիծ ունի, սակայն կրոնական գործոնը չի անտեսում: Թուրք-ադրբեջանական միասնականության ճանապարհին կրոնական խոչընդոտը վերացնելու համար պաշտոնական Բաքուն անում է ամեն ինչ՝ երկրում շիաներին մեկուսացնելու և նրանց թվաքանակը կրճատելու համար: 2018 թ. սեպտեմբերյան մի գրառման մեջ իրանագետ Վարդան Ոսկանյանը նշում է, որ Իրանի Իսլամական Հանրապետության մայրաքաղաքից խիստ և սպառնալից քննադատություն է հնչում շիայական արարողություններին հավատացյալների մասնակցությունն ամեն կերպ արգելող և սահմանափակող Բաքվի բռնապետական վարչակարգի հասցեին՝ նշելով նույնիսկ քրիստոնեական Հայաստանի օրինակը, երբ Երևանի Կապույտ մզկիթում շիա հավատացյալներն ազատորեն կատարում են իրենց բոլոր ծիսակարգերը[6]:

Ներկա իրավիճակը հասկանալու համար կարիք կա վերհիշելու պատմական իրադարձությունները: Դեռևս 16-րդ դարի սկզբներից Իրանում հաստատված Սեֆյան դինաստիան սունիթական Օսմանյան Թուրքիայի դեմ երկարատև դիմակայության ու արյունահեղ պատերազմների ընթացքում որպես պետական կրոն ընդունեց շիիզմը: Սեֆյան շահերը իսլամի այս ուղղությունը հրով ու սրով տարածեցին ոչ միայն Իրանում, այլև հարևան երկրներում, մասնավորապես ներկա Ադրբեջանի տարածքում, որի բնակչության 60 տոկոսը այժմ շիաներ են, 40 տոկոսը՝ սունիներ[7]: Կրոնական պատկանելության տրամաբանությունը թելադրում է, որ Բաքուն պետք է մերձենա Թեհրանի հետ, սակայն Ալիևի վարչակարգը բավականին հաստատակամ ձգտում է ոչնչացնել հարավից եկող շիական արմատականությունը և երկրում արևմտյան տիպի քաղաքական համակարգ ստեղծելու միջոցով մերձենալ Թուրքիայի, Ղազախստանի և նույնիսկ տարածաշրջանում Իրանի թիվ մեկ հակառակորդ Իսրայելի հետ: Հենց իրենց քաղաքական վերլուծաբանների մեծ մասի կարծիքով՝ Ադրբեջանի տիրապետող քաղաքական էլիտայի համար «առավել կարևոր է թյուրքական ազգայնականությունը, քան շիիթական Իրանի հետ համերաշխությունը»[8]: Միաժամանակ գիտակցելով, որ արտաքին քաղաքական վեկտորի ամրութ-

---

[5] Տե՛ս նույն տեղը:

[6] Տե՛ս **Վ. Ոսկանյան**, Իրանցի բարձրաստիճան հոգևորականը նշել է, թե նույնիսկ քրիստոնեական երկրներում նման արգելքներ, ինչպիսին Ադրբեջանում են, չկան // https://blognews.am/arm/news/563695 (վերջին մուտք՝ 29.03.2019):

[7] Տե՛ս **А. Аббасов.** Баку возвращает Азербайджан к суннизму, чтобы уйти от Ирана и встать в ряд с Анкарой и Астаной // ONTV - http://onkavkaz.com/news/1558-baku-vozvraschaet-azerbaidzhan-k-sunnizmu-chtoby-uiti-ot-irana-i-vstat-v-rjad-s-ankaroi-i-astan.html (վերջին մուտք՝ 29.03.2019):

[8] Նույն տեղում:

յան համար, էթնոլեզվականից բացի, խիստ կարևոր է կրոնական ընդհանրության գործոնը, իշխանությունները կիրառում են բոլոր հնարավոր միջոցները երկրում սունիների թիվն ավելացնելու համար: Երբեմն բարձրաձայնում են իբր շիաների կողմից սունիների շահերի ոտնահարման փաստեր, կամ էլ կազմակերպվում են ոստիկանական հետապնդումներ:

Թուրքիա-Ադրբեջան-Ղազախստան եռանկյունին կամ թյուրքական գործոնը: Էթնիկական ընդհանրության, մեկ ազգ երկու պետություն հայեցակարգի, ընդհանուր շահերի և Թուրքիա-Ադրբեջան տանդեմի պատմական, քաղաքական, տնտեսական և մշակութային հիմքերի մասին շատ է խոսվել, և այս իրողությունը բավականաչափ լուսաբանված է: Սրան հակառակ՝ բավականին լուրջ հետազոտության կարիք ունեն Ադրբեջան-Ղազախստան փոխհարաբերություններում մերձեցնող ու վանող գործոնները, մանավանդ որ Ղազախստանը դեյուրե Հայաստանի դաշնակիցն ու գործընկերն է եվրասիական տնտեսական և անվտանգային կառույցներում: 2016-17 թթ. Նազարբաևի և Ալիևի հանդիպումներում և բանակցություններում միշտ շեշտվել են Ղազախստանի ու Ադրբեջանի մերձեցմանը նպաստող աշխարհաքաղաքական, տնտեսական գործոնները և երկկողմ օբյեկտիվ շահերի ընդհանրությունը[9]: Միաժամանակ ցանկանում ենք ընդգծել, որ երկկողմ բարեկամական հարաբերությունների հիմքում ընկած են նաև թյուրքական ծագման էթնոմշակութային արմատները: Առաջին հերթին արձանագրենք, որ երկու երկրներն էլ անդամակցում են պանթյուրքական միջազգային կառույցներին, որոնք են Թյուրքական խորհուրդը, Թյուրքախոս երկրների խորհրդարանական վեհաժողովը (ռուս. ТюркПА) և Թյուրքական մշակույթի միջազգային կազմակերպությունը («Թյուրքսոյ»): Այս կազմակերպությունների առանցքը, իհարկե, Թուրքիան է, մշտական անդամ է նաև Ղրղզստանը, իսկ Ուզբեկստանը և Թուրքմենստանը անդամակցում են միայն «Թյուրքսոյին»: ԽՍՀՄ փլուզումից հետո պանթյուրքական թեմատիկան միշտ էլ եղել է Ադրբեջանի և Ղազախստանի ներքին ու արտաքին քաղաքականության անբաժան բաղադրիչը: Պանթյուրքական հռետորաբանությունը համարվում է նաև ազգային ինքնիշխանության ամրապնդման և Միջին Ասիայի թյուրքախոս հանրապետությունների վրա ազդեցության հաստատման միջոց: Ակնհայտ է թյուրքական «համերաշխության» Թուրքիա-Ադրբեջան--Ղազախստան առանցքային եռյակի կարևորությունը: Հայաստանի համար անվտանգային առումով որոշակի մարտահրավեր է 2005 թ. մայիսին կնքված ղազախա-ադրբեջանական դաշնակցային հարաբերությունների և ռազմավարական համագործակցության մասին պայմանա-

[9] Ադրբեջանի և Ղազախստանի միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992 թ., 1994 թ. բացվել է Ղազախստանի դեսպանությունը Բաքվում, իսկ 2004 թ. ադրբեջանականը՝ Ղազախստանում:

գիրը, որը պարտավորեցնում է ռազմական ագրեսիայի օգտագործման նպատակով թույլ չտալ իր տարածքի, հաղորդակցության ուղիների և այլ ենթակառուցվածքների օգտագործումը երրորդ պետության կողմից[10]: Ուշադրության է արժանի պայմանագրի այն կետը, որը տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործում երկկողմանի համագործակցության հիմք է համարում տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության սկզբունքը[11]: Իհարկե այստեղ երևում է Ալիևի ձգտումը՝ թյուրքական եղբայրությունը օգտագործել ղարաբաղյան հակամարտության ցանկալի լուծման հասնելու համար՝ մերթընդմերթ շրջանառության մեջ դնելով Անկարայի և Աստանայի «խաղաղարար» միջնորդության անհրաժեշտության գաղափարը: Միջազգային հարթակներում հիշյալ եռյակը օգտագործում է նաև թուրքական սփյուռքի դերը, «Թուրքական խորհրդի» անդամ պետությունները 2013 թ. Բաքվում հիմնեցին «Սփյուռքի գործերի պատասխանատուների կոնտակտային խումբ»[12]:

Ադրբեջանը Թեհրանի և Թել Ավիվի միջև: Ադրբեջանը բավականին բարդ վիճակում է հայտնվել իրանա-իսրայելական թշնամական հարաբերությունների պատճառով: Իրանի իսլամական վարչակարգը իր արտաքին քաղաքական առաջնահերթություններից է համարում նաև հրեական պետության մեկուսացումն ու չեզոքացումը: Արևմտյան քաղաքագետներն արդեն կանխատեսում են ռազմական բախումը Իրանի և Իսրայելի միջև: Այս բարդ հակամարտության մեջ նկատելի է նաև շիա մահմեդականների և հրեաների կրոնական անհանդուրժողականության գործոնը: Այս իրավիճակը Ադրբեջանին դնում է անհարմար դրության մեջ: Իրանը և Իսրայելը Բաքվի իշխող վարչակարգի համար տնտեսական և քաղաքական կարևոր գործընկերներ են: Իսրայելը վերջին տարիներին նորագույն բարձր տեխնոլոգիաներով հագեցած զինատեսակներ է մատակարարում Ադրբեջանին, որն օգտագործվեց նաև 2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ: Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում Իսրայելը բացահայտ պաշտպանում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, որն իր հերթին ջերմացնում է երկկողմ հարաբերությունները: Ինչպես արդեն նշեցինք, մյուս կողմից էլ Իսրայելի անհաշտ թշնամի Իրանը՝ որպես տարածաշրջանային հզոր ուժ, Ադրբեջանի համար ունի էթնոկրոնական կարևոր նշանակություն[13]: Իրադրության բարդությունը

---

[10] Տե՛ս **А. Шустов.** Казахстан–Азербайджан: тюркский мир, скрепленный нефтью? // http://eurasia.expert/kazakhstan-azerbaydzhan-tyurkskiy-mir-skreplennyy-neftyu (վերջին մուտք՝ 29.03.2019):

[11] Տե՛ս նույն տեղում:

[12] Տե՛ս **Ա. Սիմավորյան**, Թուրքիան և թյուրքալեզու երկրների սփյուռքերի համագործակցությունը // http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=16909 (վերջին մուտք՝ 29.03.2019):

[13] Տե՛ս **Н. Гаджиев.** Азербайджан между Тегераном и Тель-Авивом: политика здравого

անմիջականորեն պայմանավորված է նաև Արևմուտք-Իրան հակամարտության սրումով, իրանական միջուկային ծրագրի և սիրիական թնջուկի շուրջ ծավալված պայքարով: Իսլամական հեղափոխությունից ի վեր պահպանվող Իրանի հակաարևմտյան քաղաքականությունը բազմաթիվ խնդիրներ է առաջացրել Արևմուտքի համար ինչպես մերձավորարևելյան տարածաշրջանում, այնպես էլ էներգետիկ շուկայում և հակաահաբեկչական միջոցառումներ իրականացնելիս: Եվ պատահական չէ, որ ուղեղային վերլուծական կենտրոններում ավելի հաճախ են խոսում ադրբեջանաբնակ հյուսիսարևմտյան նահանգների միջոցով Իրանում ապակայունացնող լայնածավալ գործողություններ իրականացնելու հնարավորության մասին: 2017 թ. ամռանը Թավրիզում, Ուրմիայում, Արդեբիլում և մի քանի այլ քաղաքներում տեղի ունեցան մայրենի լեզվով կրթություն ստանալու պահանջով ցույցեր, երթեր, նկատվեց հասարակական լուրջ ակտիվություն: Բացի այդ, ուշադրության է արժանի Իսրայելի պաշտպանության նախարար Ավիգդոր Լիբերմանի հնգօրյա փակ պաշտոնական այցը Ադրբեջան, որի ընթացքում նա գաղտնի բանակցություններ էր վարում ոչ միայն Ալիևի, այլև ուժային կառույցների ղեկավարների հետ: Եվ պատահական չէր, որ այդ օրերին պաշտոնական շրջանակներին մոտ կանգնած լրատվամիջոցները Ադրբեջանը որակում էին որպես Իսրայելի ռազմավարական դաշնակից[14]: Ստացվում է միջպետական հարաբերությունների մի կախարդական և հակասական շրջանակ, որտեղ համագործակցությունն ուղեկցվում է նաև հակամարտությամբ, և այդ շրջանակում առկա է էթնոկրոնական գործոնը: Ադրբեջանական բնակչություն ունեցող շիական հարևանի հետ համագործակցության օբյեկտիվ անհրաժեշտությունը հակասում է տարածաշրջանում Իրանի թիվ մեկ հակառակորդ Իսրայելի հետ ռազմաքաղաքական գործընկերությանը: Անկախ ամեն ինչից՝ իրանա-իսրայելական հակամարտությունը վնասում է Ադրբեջանի շահերին ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ոլորտներում:

Սաուդյան Արաբիա-Ադրբեջան-Իրան եռանկյունին: Մերձավորարևելյան տարածաշրջանում սրված սունի-շիա կրոնական հակամարտության գործոնը առկա է նաև այս եռանկյունու միջպետական հարաբերություններում: Սաուդյան Արաբիայի հարավկովկասյան տարածաշրջանային քաղաքականության թիրախը «շիիթական Իրանի ներթափանցման» դեմ պայքարն է[15]: Ինչպես արդեն նշեցինք, Իրանի հյուսիսային ադրբեջանաբնակ նահանգների (Արևմտյան Ադրբեջան,

---

смысла // http://press-unity.com/analitika-stati/11273.html (վերջին մուտք՝ 29.03.2019):

[14] Տե՛ս «ФСК-Аналитика» // https://www.fondsk.ru/news/2018/09/27/vizit-putina-v-baku-regionalnyj-kontekst 46857.html (վերջին մուտք՝ 29.03.2019):

[15] Տե՛ս **Д. Нефёдов**. Саудовская Аравия нацеливается на Иран с Кавказа // Фонд Стратегической Культуры // https://www.fondsk.ru/news/2018/03/21/saudovskaya-aravia-nacelivaetsja-na-iran-s-kavkaza-45816.html (վերջին մուտք՝ 29.03.2019):

Արևելյան Ադրբեջան, Արդեբիլ) անջատողական ձգտումները և ալիևյան վարչակարգի հակազդեցությունը սեփական երկրում շիա բնակչության շրջանում իրանական ազդեցության տարածմանը նպաստավոր պայմաններ են ստեղծում Էր Ռիադի նպատակների իրականացման համար: Առաջին հերթին պետք է նշել, որ անկախության հռչակումից ի վեր Ադրբեջանը մշտապես եղել է Սաուդյան Արաբիայի ուշադրության կենտրոնում: Տնտեսական օգնությունից և մշակութային ծրագրեր իրականացնելուց բացի, Ադրբեջանին առանձնահատուկ կրոնական օժանդակություն է ցուցաբերվում: 1993-1997 թթ. Ադրբեջանում Սաուդյան Արաբիայի միջոցներով վերականգնվել են 220 սունիթական մզկիթներ, իրականացվել են լոբբիստական աշխատանքներ: 2015 և 2017 թթ. Իլհամ Ալիևը պաշտոնական այց է կատարել Էր Ռիադ, դրանից առաջ Բաքվում եղել էր սաուդական Ընդհանուր հետախուզության ծառայության տնօրեն Թուրքի ալ-Ֆեյսալը, որը հայտնի է էթնոկրոնական համայնքների ներկայացուցիչների հետ իր ակտիվ աշխատանքով: «Սաուդյան Արաբիան Իրանին նշանառության տակ է վերցրել Կովկասից»,- այսպիսի դիպուկ բնորոշում է տալիս մեր նշած եռանկյունուն քաղաքագետ Դմիտրի Նեֆյոդովը[16], ինչին չի կարելի չհամաձայնել: Սաուդա-ադրբեջանական մերձեցումը ընթանում է տնտեսական, քաղաքական, կրոնամշակութային ոլորտներում: Անընդհատ խորանում է ռազմական համագործակցությունը Ադրբեջանի պաշտպանության նախարարի հետ հաճախակի հանդիպումների ու բանակցությունների միջոցով[17]: Այս ոլորտում էական է Լեռնային Ղարաբաղի հարցում կողմերի ընդհանուր դիրքորոշումը:

Սաուդյան Արաբիայի մերձեցումը կարող է էլ ավելի նպաստավոր պայմաններ ստեղծել Ադրբեջանում սունի ուղղության տարածման համար: Այս հանգամանքը մեծ անհանգստություն է առաջացնում Թեհրանում, որտեղից նախազգուշական հայտարարություններ են արվում: Երբեմն էլ ալիևյան վարչակարգը ստիպված է լինում մանևրել՝ փորձելով միաժամանակ մեկ ձեռքով երկու ձմերուկ բռնել: Իրավիճակը բարդանում է նրանով, որ հակահիրանական ուժերը՝ Իսրայելը, Սաուդյան Արաբիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Վաշինգտոնի քաջալերմամբ ամեն ինչ անում են Ադրբեջանին իրենց պլաններում ներքաշելու համար: Դժվար է կանխատեսել՝ ի վերջո ինչ հետևանքներ կարող է ունենալ այս քաղաքականությունը, սակայն մի

---

[16] Տե՛ս նույն տեղը:

[17] Սաուդյան թագավորության կառավարության առաջին դեմքը՝ արքայազն Մուհամմեդ բին Սալմանը, մշտապես հովանավորում է համագործակցությունը Ադրբեջանի հետ, որը Բաքվում ներկայացվում է որպես ռազմավարական գործընկերություն (տե՛ս **Гасанов А.** Азербайджан и Саудовскую Аравию объединяют общие ценности и взаимовыгодные связи // https://azertag.az/ru/xeber/Ali_Gasanov_Azerbaidzhan_i_Saudovskuyu_Araviyu_obedinyayut_obshchie_cennosti_i_vzaimovygodnye_svyazi_VIDEO-1032468 (վերջին մուտք՝ 29.03.2019)):

բան պարզ է. Ադրբեջանի և Սաուդյան Արաբիայի համագործակցությունը բացասական են ընդունում և՛ Իրանը, և՛ Ռուսաստանը: Հնարավոր է, որ այս համագործակցությունը որոշակի մտահոգություններ առաջացնի նաև Թուրքիայում, որն իր փոքր եղբորը չի ցանկանա տեսնել այլ ազդեցությունների ոլորտում: Այս կանխատեսումը հիմնավորվում է սիրիական ճգնաժամի հանգուցալուծման գործընթացում ձևավորված Ռուսաստան-Թուրքիա-Իրան համագործակցային ձևաչափով, որտեղ և՛ Մոսկվան, և՛ Թեհրանը Սաուդյան Թագավորության հակառակորդներն են: Պարզ է, որ Էրդողանը չի կարող անտեսել այս հանգամանքը և ոգևորված չէ Բաքու-Էր Ռիադ համագործակցությամբ: Այնպես որ, Սաուդյան Արաբիա-Ադրբեջան-Իրան եռանկյունին նույնպես խնդրահարույց է և խոցելի:

Հայկական գործոնը տարածաշրջանային էթնոկրոնական գործընթացների զարգացումներում: Հազարամյակներ շարունակ ապրելով ու արարելով իր հայրենիքում՝ հայ ժողովուրդը երբեք էլ ընդգծված ատելություն ու անհանդուրժողականություն չի ունեցել հարևան ժողովուրդների նկատմամբ: Ներկա լինելով համաշխարհային կրոնների խաչման առաջավորասիական տարածաշրջանում՝ հայությունը երբեք իրեն չի հակադրել այլ կրոններին և էթնոսներին, իսկ մասնակցությունը էթնոկրոնական բնույթի բախումներին կրել է հիմնականում ինքնապաշտպանական բնույթ: Կան պատմական հավաստի փաստեր, որ նույնիսկ իսլամի հիմնադիր Մուհամմեդ մարգարեն Մեքքա քաղաքում 626 թվականին հանդիպել է Երուսաղեմի հայոց պատրիարք Աբրահամի և 40 նշանավոր հայերի պատվիրակության հետ: Հանդիպման ավարտին Մուհամմեդ մարգարեն հրովարտակ է հրապարակել հայոց պատրիարքին հովանավորելու և պաշտպանելու մասին[18]: Հակառակ դրան՝ մեր հարևանները ինչպես նախկինում, այնպես էլ այժմ աչքի են ընկնում իրենց կրոնաազգայնական անհանդուրժողական դիրքորոշումներով: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես հայ ժողովրդի նորագույն պետականություն, ունի էթնիկական և կրոնական յուրահատուկ դիմագիծ: Հայերը լեզվական, էթնիկական և կրոնական հատկանիշներով չունեն ազգակիցներ կամ կրոնակիցներ: Իհարկե, նկատի ունենք այն հանգամանքը, որ հայ առաքելական հավատքը և առաքելական ուղղության հայ եկեղեցին նույնպես եզակի են և մյուս քրիստոնեական ուղղություններին չեն պատկանում: Չնայած այս իրողությանը՝ հայկական գործոնը առկա է տարածաշրջանային էթնոկրոնական գործընթացների զարգացումներում: Արցախյան հակամարտությունը և Հայոց ցեղասպանությունը ճանաչելու գործընթացը նպաստել են, որ միջազգային հանրությունը իրազեկված լինի Ադրբեջանի և Թուրքիայի

[18] Տե՛ս **Հ. Սասունյան**, Մուհամմեդ Մարգարեի քիչ հայտնի հրովարտակը՝ տրված Երուսաղեմի հայոց պատրիարքին // http://www.noravank.am/arm/articles/detail. php/?ELEMENT_ID=17667 (վերջին մուտք՝ 29.03.2019):

դիրքորոշումներին: Մեր երկու հարևաններն էլ միշտ ձգտում են Հայաստանը որակել որպես թյուրքալեզու ազգերի ու մահմեդականների շատ վտանգավոր թշնամի՝ միջպետական հարաբերություններում դնելով նաև այս ենթատեքստը: Բնորոշ են Կովկասի մուսուլմանների առաջնորդ Ալլահշուքյուր Փաշազադեի խոսքերը. նա հայերին համարում է «անեծք» ադրբեջանցիների գլխին և մեղադրում ցեղասպանություն կազմակերպելու և քրիստոնյաների ու մուսուլմանների միջև թշնամանք հրահրելու մեջ[19]: Իհարկե նորություն չէ ադրբեջանական ղեկավար շրջանների հակահայկական քարոզը, սակայն կարիք կա հստակ ընդգծելու, որ բացահայտ է հարևան երկրներին ազգային ու կրոնական երանգներով Հայաստանի դեմ տրամադրելու միտումը: Ի դեպ՝ թուրք-ադրբեջանական տանդեմը ձգտում է այդ մտայնությունը բարձրացնել միջազգային մակարդակի: 2017 թ. մարտին Իսլամաբադում կայացած Իսլամական համագործակցություն կազմակերպության համաժողովում Էրդողանը և Ալիևը իրենց ելույթներում կոչ արեցին մուսուլմանական երկրներին օժանդակել Ադրբեջանին ղարաբաղյան հակամարտության լուծման գործում և այդ հարցը բարձրացնել բոլոր միջազգային հարթակներում: Թուրքիայի նախագահի խորհրդական Յալչին Թոփչուն իր հերթին կոչ արեց «երկու միլիարդ մուսուլմանների համար օրակարգային դարձնել հայ-ադրբեջանական պատերազմը»[20]: Սակայն իրականում կրոնական քողի՝ իսլամի դրոշով հանդես գալը արդյունավետ չէ, որովհետև կրոնական ընդհանրության հենքով թուրքական հավակնությունները հաճախ անընդունելի են մյուս մահմեդական պետությունների համար: Նրանք գերադասում են չփչացնել հարաբերությունները Մինսկի խմբի համանախագահ պետությունների հետ և հայ-ադրբեջանական հակամարտությունը չմտցնել իսլամական միասնական օրակարգ: Ապարդյուն են անցել եվրոպական քաղաքական կառույցներից բանակցային գործընթացի ղեկավարումը վերցնելու փորձերը: Այն կանխավարկածը, որ իբր ԱՄՆ-ն, Ռուսաստանը և Ֆրանսիան որպես քրիստոնյա երկրներ աջակցում են Հայաստանին, տապալվել է, և չի հաջողվել հակամարտությանը կրոնական երանգ տալ: Բացառությամբ Պակիստանի, ձախողվել են նաև իսլամական պետությունների և Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու Բաքվի ձեռնարկումները:

Ներկայումս հայկական թեմատիկան՝ հայ-թուրքական հարաբերությունները, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հետևանքները և հայ-ադրբեջանական հակամարտության տարածա-

---

[19] Տե՛ս Духовный лидер Азербайджана: Армяне стали проклятьем на нашу голову // http://www.golosarmenii.am/article/64373/duxovnyj-lider-azerbajdzhana-armyane-stali-proklyatem-na-nashu-golovu (վերջին մուտք՝ 29.03.2019):

[20] **С. Тарасов**, Нагорно-карабахский конфликт между исламом и христианством // ИА REGNUM https://regnum.ru/news/polit/2244153.html (վերջին մուտք՝ 29.03.2019):

շրջանային նշանակությունը, թուրքական ռազմավարական հետազոտությունների և ուղեղային կենտրոնների ուշադրությունն է գրավել: Հետազոտությունները միտում ունեն հայությանը ողջ աշխարհում ներկայացնել որպես որոշակի վտանգ և մարտահրավեր թյուրքախոս ժողովուրդների համար: Թուրքերի նկատմամբ հայերի իրականացրած «ցեղասպանության» դրույթը և հայերի նկատմամբ էթնիկական անհանդուրժողականությունը նրանց օրակարգում են[21]: Այս գործում ակտիվ է հատկապես Թուրք-ասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (TASAM), որի նախաձեռնությամբ 2015 թ. մայիսին գումարված համաշխարհային թյուրքական ֆորումում թուրք և ադրբեջանցի պաշտոնատար անձանց, փորձագետների, հետազոտողների և քաղաքական շրջանների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվեցին նաև Հայաստանի և հայկական սփյուռքին վերաբերող հարցեր[22]: Ի դեպ՝ քաղաքագիտական հետազոտական ուղեղային կենտրոնները ներկայումս համարվում են հինգերորդ իշխանություն ու քաղաքական որոշումների ընդունման և քաղաքական գործընթացների վրա ազդեցության սուբյեկտներ, որն արդեն փաստ է արդի քաղաքական իրողություններում: Բնականաբար, այստեղ արծարծվող հակահայկական ուղղվածության դրույթները մի օր էլ հայտնվում են միջպետական օրակարգում և իրենց հետքն են թողնում տարածաշրջանային գործընթացների վրա:

Եզրակացություն: Հարավային Կովկասի պետությունները սահմանակցում են աշխարհաքաղաքական բավականին բարդ ու հակասական մերձավորարևելյան տարածաշրջանին: Վերջին տարիների քաղաքական զարգացումները և հատկապես սիրիական ճգնաժամը էլ ավելի են բարդացրել իրավիճակը: Էթնոքաղաքական հակամարտություններին հարավկովկասյան և մերձավորարևելյան տարածաշրջաններում գումարվել են նաև կրոնական ու էթնիկական անհանդուրժողականության ահավոր բռնկումները, որոնք հանգեցրել են արյունահեղ ընդհարումների և ահաբեկչության ծավալման: Իրաքում և Սիրիայում ծավալված իրադարձությունները, եզդիների ու քրդերի կոտորածները, սունիների ու շիաների արյունալի ընդհարումները վկայում են, որ էթնիկական ու կրոնական անհանդուրժողականությունը, ազգայնամոլությունը ոչ միայն չեն վերացել հետսառըպատերազմյան աշխարհում, այլև նոր թափ են ստացել: Այսպիսի պայթունավտանգ իրականությունն ավելի է բարդանում ռուս-ամերիկյան, իրանա-ամերիկյան և արաբա-իսրայելական հակասությունների սրմամբ և սպառազինությունների նոր մրցավազքով:

---

[21] Տե՛ս **Симаворян А.** Армянские исследования в турецких мозговых центрах // http://www.noravank.am/rus/articles/detail.php/detail.php?ELEMENT_ID=12786 (վերջին մուտք՝ 29.03.2019):

[22] Տե՛ս **Симаворян А.** Армянские вопросы в повестке третьего всемирного тюркского форума // http://www.noravank.am/rus/articles/detail.php/detail.php?ELEMENT_ID=12935 (վերջին մուտք՝ 29.03.2019):

Բանալի բառեր – *կրոնական և էթնիկական ընդհանրություն, Հրավային Կովկաս, Մերձավոր Արևելք, տարածաշրջանային քաղաքականություն, սունի-շիա հակամարտություն, էթնիկ և կրոնական անհանդուրժողականություն*

ГАРИК КЕРЯН – *Фактор религиозной и этнической общности в региональных политических процессах.* – В межгосударсвенных отношениях Южного Кавказа и Ближнего Востока весьма важен религиозный и этнический фактор. Кофликт между суннизмом и шиизмом в исламе влияет на отношения между Турцией, Ираном, Азрбайджаном и Саудовской Аравией. В этом противостоянии тюркская общность сближает Турцию, Азербайджан и Казахстан. Израиль же в своей региональной политике поддерживает антишиитские силы.

Ключевые слова: *религиозная и этническая общность, Южный Кавказ, Ближный Восток, региональная политика, конфликт суннитов и шиитов, этническая и религиозная дискриминация*

GARIK KERYAN – ***Factor of Religious and Ethnic Community in the Regional Political Processes***. – Interstate relations between the countries of the South Caucasus and the Middle East strongly perceive the religious and ethnic factor. The conflict between the religious areas of Sunni and Shiya affects the relations between Turkey, Iran, Azerbaijan, and Saudi Arabia. In this process, the Turkic community brings Turkey, Azerbaijan, and Kazakhstan closer. Israel in its regional policy supports anti-Shiite forces.

Key words: *religious and ethnic community, the South Caucasus, the Middle East, regional policy, sunni-shia conflict, ethnic and religious discrimination*

Ներկայացվել է՝ 08.11.2018, գրախոսվել է՝ 12.03.2019, ընդունվել է տպագրության՝ 26.04.2019